



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

№ ԳՍ/15.2/28461-2022

ՀՀ Լոռու մարզպետ
Ա. Խաչատրյանին

Հարգելի՛ պարոն Խաչատրյան

Խնդրում ենք քննարկել անկախ լրագրող Ադրինե Թորոսյանի՝ ՀՀ Լոռու մարզում տեղադրված հակակարկտային կայանների թվի ու արդյունավետության վերաբերյալ հարցումը և մինչև սույն թվականի հոկտեմբերի 26-ը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տեղեկատվություն:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

 Invalid signature

X 

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հարգանքով՝

Signed by: SANOSYAN GNEL 1710830069

Գ. Սանոսյան

Կապարող՝ Տարածքային զարգացման պլանավորման բաժնի գլխավոր մասնագետ, Մ. Վարդանյան
Հեռ. 010515123

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել
Սանոսյանին

անկախ լրագրող Ադրինե Թորոսյանից

ՀՀ քաղաքացի

Ք. Վանաձոր, Երևանյան խճ. 145/1., բն 35

հեռ. 041 796 996

Տեղեկություն ստանալու հարցում


Համաձայն ՀՀ սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Լոռու մարզում քանի՞ հակակարկտային կայան է տեղադրված և կոնկրետ ո՞ր համայնքներում: Ի՞նչ սկզբունքով և ո՞ւմ կողմից է որոշվում դրանց տեղեկայման առաջնահերթությունն ու անհրաժեշտությունը (խոսքն այս դեպքում պետության համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի մասին է):
2. Լոռու համայնքներից որո՞նք են սուբվենցիոն միջոցներով ձեռք բերել հակակարկտային կայաններ, որքա՞ն է կազմել ծրագրերի ընդհանուր բյուջեն, որքա՞ն է համայնքային և որքա՞ն կառավարության ներդրումը դրանցում (յուրաքանչյուր համայնքի համար խնդրում ենք տրամադրել առանձին տվյալներ): Միայն համայնքային բյուջեներով և մասնավոր տենտեսվարողների կողմից ձեռք բերված՝ քանի՞ կայան կա Լոռու մարզում (ըստ առանձին համայնքների):
3. Ծրագրերի իրականացման արդյունքում քանի՞ հեկտար տարածքի պաշտպանություն է ապահովվել, քանի՞ տնտեսություն է շահառու, և դա համայնքի տնտեսվարողների քանի՞ տոկոսն է կազմում (տվյալները խնդրում ենք տրամադրեք ըստ առանձին համայնքների):
4. Լոռու ո՞ր համայնքներն են լիարժեք ապահովված հակակարկտային կայաններով, և կա՞ն համայնքներ, որոնցում դրանք ընդհանրապես բացակայում են. վերջին դեպքում նշել նաև պատճառը (ներք):

5. Ինչպե՞ս եք գնահատում հակակարկտային կայանների արդյունավետությունը և որպես դրանց այլընտրանք՝ հակակարկտային ցանցերի արդյունավետությունը:
6. Լոռիում քանի՞ տնտեսություն է օգտվում կարկտապաշտպան ցանցերի համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից (տվյալները խնդրում ենք մասնավորեցնել ըստ համայնքների):
7. Լոռիում քանի՞ տնտեսություն է օգտվում ապահովագրման ծրագրից (տվյալներն՝ ըստ համայնքների), դա ընդհանուր տնտեսությունների քանի՞ տոկոսն է կազմում, և օրինակ վերջին մեկ տարում որքա՞ն կազմել պետբուջեից տրվող փոխհատուցումն աղետից տուժած տնտեսություններին (ըստ համայնքների):
8. Լոռիում տեղադրված հակակարկտային կայանները ո՞ր ապրանքատեսակին են պատկանում, ինչպե՞ս, ի՞նչ հիմունքով է որոշվել և կազմակերպվել տվյալ ապրանքատեսակ(ներ)ի նախապատվությունն ու դրանք արտադրող կամ ներկրող ընկերություններից գնման գործընթացը, ո՞ւմ կողմից է այն վերահսկվում:
9. Լոռիում և նաև Հայաստանի մյուս համայնքներում ո՞ր ընկերության հակակարկտային ցանցերն են տեղադրված (Լոռու տվյալներն՝ ըստ համայնքների):
10. Հակակարկտային ցանցեր արտադրող քանի՞ ընկերություն կա Հայաստանում, դրանցից որո՞նք են օգտվել պետական աջակցություններից կամ արտոնություններից, և ի՞նչ հիմունքով է կայացվել այդ ընտրությունը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11):

Կանխավ շնորհակալ եմ՝ Ադրինե Թորոսյան



19.10.2022 p.